

ԳՈՐԻՍԻ ԽՈՍՎԱԾՔԻ ՀՆՁՅՈՒՆԱՆԻ ՀՆՁՈՒՅԹԱԲԱՆԱԿԱՆ
ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԺԱՆՆԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Գորիսի խոսվածքը¹, գյուղական իր բոլոր տարբերակներով, առաջին անգամ ուսումնասիրել է Ալ. Մարգարյանը²։ Նա քննության է ենթարկել խոսվածքի հնչյունաբանությունը, ձևաբանությունը, բառագիտությունը։ Մեր նպատակն է անդրադառնալ Գորիսի խոսվածքի հնչյունա-հնչյութաբանական այն առանձնահատկություններին, որոնք հիշյալ աշխատանքում բավարարողադրության չեն արժանացել կամ էլ այլ մեկնաբանություն են ստացել։

Հայտնի է, որ Գորիսի խոսվածքը բառասկզբի դիրքում չունի պայթական և կիսաշփական ձայնեղ բաղաձայններ։ Դրանց փոխարեն առկա են խուլեր. օրինակ՝ բան>պան, գործ>գործ, գութան>գութան, ջուր>մուր, դանակ>տանակ, ձախ>ծախ և այլն³։ Սակայն բառամիջում, որոշ դիրքերում, նկատվում է խուլերի ձայնեղացում։ Այն է.

ա) ն ձայնորդից հետո. օրինակ՝ բանտ>պանդ, մատն>մա՛նդը, ոտն>վո՛ւնդը, ծունկն>ծո՛ւնգը, նան>նանը, ձնծաղիկ>ծընծա՛ղիկ։ Այս օրենքը գործել է երկար ժամանակ և հետևողականորեն, որովհետև լայն ընդգրկում ունի։ Այս օրենքին են ենթարկվել անգամ ոչ վաղ անցյալում ուսերենից սեմիջական կամ գրական հայերենի միջոցով կատարված փոխառությունները՝ ծահկ—բանգ, ծահկա—բա՛նգա, πατρονταίա—պատրոնեյա՛շ «փամփըշ-տակալ», κο.ιεκκορ—կրլինգո՛ւր «մամլաթ» և այլն⁴։

Հիշյալ օրենքից դուրս են մնում ան- ժխտական ածանցով բաղադրված բառերը (ա՛նդլէր<անտէր բառը բացառություն է) և ուշ շրջանի փոխառությունները. ինչպես՝ անպակաս>անպա՛կաս, անպատիվ>անպա՛ղիվ, անբան>անպան, անջուր>անճու՛ր, անտեղի>անտէ՛ղի, այլև՝ անտառ>անտառ, монтер—մանտօր, зонтик—զօնթիկ, кохтора—կանտօրա։

բ) Միջձայնավորային դիրքում տ>դ, պ>բ, կ>գ. օրինակ՝ հետոյ>յէ՛րսվ, պատանել>պըդա՛նիլ, դեպ(ի)>դիբա՛ (բառասկզբի ձայնեղ դ-ի առկայությունը, հավանաբար, բ-ի առնմանության արդյունք է), նապաստակ>բլըբա՛ստակ, հպատակ>հըբա՛ղակ, սիպեղ>սի՛բլէղ(նը), ստիպել>ըստի՛բիլ, եկեղեցի>յէգէղէ՛ցի (նաև յէղէ՛ցի), երեկոյ>ա՛րմաճի, թիկունք>թլէ՛գունք և այլն։

1 Ըստ Գ. Բ. Զահուկյանի դասակարգման, բարբառային այս միավորը խոսվածք է («Հայ բարբառագիտության ներածություն», Երևան, 1972, էջ 136)։

2 Ալ. Մարգարյան, Գորիսի բարբառը, Երևան, 1975։

3 Ուշ շրջանում թուրքերենից, պարսկերենից, ուսերենից, գրական հայերենից կատարած փոխառությունների մեջ նշված դիրքում խոսվածքն այժմ ունի նաև ձայնեղ բաղաձայններ, որոնք խուլերի նկատմամբ հնչյութային հակադրության մեջ են։

4 Հիմնականում հենվում ենք Գորիս քաղաքի խոսվածքի վրա, որովհետև այն ավելի քիչ է ազդվել հարևան բարբառներից, քան շրջակա գյուղերինը։

Օրենքին ենթարկվել են անգամ գրական հայերենից կամ ռուսերենից կատարված որոշ փոխառություններ. օրինակ՝ դեկավար > դեկավա՛ր, դա-տաւան > դադա՛րան, պետություն > պե՛տութո՛ւն, հաշվապահ > հաշվաբա՛հ, առճուռ > շրլա՛բա, առճուռ > շաքալա՛թ: Բայց եթե նշված բաղաձայնները միջձայնավորային դիրքում են գտնվում բառի թեքման կամ բաղադրման հետևանքով, չեն ձայնեղանում. օրինակ՝ պատ—պըտըրհա՛ն (սլատի մեջ պահարան), պապ—պա՛պունց, ա՛րևուտ—ըրնօ՛տիլ, պա՛րանկ—պի՛րանկիլ:

Կան մեծ թվով բառեր, որոնցում միջձայնավորային դիրքում խուլերը չեն ձայնեղանում. ինչպես՝ պակաս > պա՛կաս, հակատ > հա՛կատ, ուտիլ > օ՛տիլ, սատանալ > սա՛տանա, տապան > տա՛պան, տիկին > տե՛կին և այլն: Սա ենթադրել է տալիս, որ այդ դիրքում խուլերի ձայնեղացումը ուշ շրջանի երեվոյթ է:

գ) Բառավերջում, ձայնավորից հետո տ > դ. օրինակ՝ փայտ > փե՛ղ, փշատ > փը՛շա՛դ, հավատ > հա՛վադ (բայց՝ հրվառա՛ցալ ա), վաճապետ > վաճաբե՛ղ, հաստատ > հա՛ստադ, ինչպես նաև ռուսերենից կատարված մի քանի փոխառություններում՝ αδοκατ—ադկազա՛դ, κοκφета—կա՛մփեդ, βαρχατ—բա՛րխադ: Սակայն որոշ բառերում, ինչպես՝ խրատ > խըրատ, առավօտ > ըռա՛վե՛տ, արմատ > ա՛րմատ, առօտ > ա՛րօտ և այլն, տ > դ անցում չի նկատվում:

դ) Բ ձայնորդից հետո տ > դ, կ > գ. օրինակ՝ մկրտել > մըգըդի՛լ, երկիր > յե՛րգիւր, երկինք > յե՛րգինք, փրկիչ > փըրգի՛չ, ռուս. картох—կա՛րդոն: Բ-ից հետո նշված խուլերի ձայնեղացում չի կատարվում այնպիսի արմատական բառերում, ինչպես՝ սիրտ > սը՛րտ, արտ > աըտ, երկու > ե՛րկու, ծիրտ > ծը՛րտ, երկաթ > ա՛րկաթ և այլն, որոնք գրական փոխառություններ չեն կարող:

Նշված բոլոր դիրքերում խոսվածքը գրաբարյան ձայնեղները պահպանում կամ փոխում է շնչեղ խուլերի, ինչպես բարբառների մեծ մասը և գրական հայերենը:

ն-ից հետո ձայնեղները, գրական հայերենի նման, հիմնականում պահպանվում են՝ ալանը > ա՛նջուկ, բանջար > ալե՛նջա՛ր, գանգատ > կա՛նգա՛տ, գին > կին, ժառանգ > ժա՛ռանգ, հիվանդ > հի՛վանգ, հեծել > հի՛նծի՛լ, նինջ > նը՛նջ, պինդ > պը՛նդ:

Հավանաբար ն-ից հետո ձայնեղների պահպանումն էլ հենց նպաստել է այդ դիրքում խուլերի ձայնեղացմանը: Հետևաբար, վերջին երևույթը կարելի է գիտել որպես առաջինի շարունակություն:

Մյուս դեպքերում ձայնեղների դիմաց առկա են շնչեղ խուլեր. ինչպես՝ շաբաթ > շա՛փաթ, հստիք > հա՛սփիլ, թագաւոր > թա՛փալե՛ր, կարագ > կա՛րաֆ, ձիգ > ձի՛ֆ, երգ > յե՛րֆ, դադար > թա՛թա՛ր, մարդ > մա՛րթ, վարդ > վա՛րթ, խնդրել > խը՛նթըլ, կենդան > կը՛նթան, օձ > օց, մեջ > մէ՛չ, վերջ > վե՛րչ, սուր > աը: Ուրեմն, հատկապես միջձայնավորային բ- ձայնորդին հաջորդող, բառավերջի հոմաձայնավորային դիրքերում խուլ բաղաձայնների ձայնեղացման երևույթը հաջորդել է այդ դիրքերում ձայնեղների շնչեղ խուլերի վերածվելու օրենքին: Հակառակ դեպքում գրաբարյան խուլերից ծագող ձայնեղ բաղաձայնները ևս, ենթարկվելով ընդհանուր օրենքին, կդառնային շնչեղ խուլեր: Խուլերի ձայնեղացումը բավական ուշ շրջանի արդյունք է, և, հավանաբար,

դրական լեզվի հակազդեցության շնորհիվ այն խոսվածքում լայն տարածում
չի ստացել:

Խոսվածքն ունի քմային բաղաձայններ, որոնք հանդես են գալիս առաջնային շարքի ձայնավորներից առաջ։ Փմայնությունն ավելի ակնհայտ է Վ, Կ, Ի, Լ բաղաձայնների դեպքում։ Սակայն բաղաձայնների քմայնություն— ո՛չ քմայնություն հակադրությունը խոսվածքում հնչույթային արժեք չի ստանում։ Դրա լավագույն ապացույցն այն է, որ նույն բառը կարող է արտասանվել և՛ բաղաձայնի քմայնացմամբ, և՛ առանց ակնհայտ քմայնացման՝ **Հագրելով բառիմաստի վրա. օրինակ՝ կմրի—կմրի «գարի», կհա—կհա «գեսա», քիշե՛ր—քիշե՛ր, «գիշեր», Լ՛ավ—Լավ Լումվ, Լ՛ագ՛մն—Լագ՛ն «թաս», Կ՛ի՛ծխ—Կի՛ծխ «գյուխ» և այլն։**

Գորիսի խոսվածքի ձայնավորներն իրար հակադրվում են առաջնային և ոչ առաջնային շարքերի տարբերակներով: Առաջնային շարքի ձայնավորներն են. *ա, օ, ու, է, ի, ի* (թույլ *ի*), որոնց հակադրվում են *ա, օ, ու, է, ը* ոչ առաջնային ձայնավորները:

Ան, օն, ուն, հն գրական հայերենի համապատասխան ձայնավորներ
 րի համեմատությամբ ավելի փակ են և առաջնալեզվալին, իսկ ա-ն, օ-ն,
 լ՛-ն դրական հայերենի այդ նույն ձայնավորներից ավելի ստորին դիրք
 ունեն. այսինքն՝ դրանք ոչ թե գրականի նման են արտաբերվում, ինչպես
 գտնում է Ալ. Մարգարյանը⁵, այլ՝ բավական բաց։ Հետևաբար, գրական հա-
 յերենի ա-ն, օ-ն, է-ն իրենց բարձրացման աստիճանով Գորիսի խոսվածքի
 առաջնային շարքի և ո՛չ առաջնային շարքի համապատասխան ձայնավորնե-
 րի նկատմամբ գրեթե միջին դիրք են գրավում։

Ու, ի, ք ձայնավորներն իրենց արտասանական բնույթով և բարձրացման աստիճանով նմանվում են զրական հայերենի համապատասխան ձայնավորներին:

Խոսվածքում ձայնավորների հնչյունափոխությունը հիմնականում կախված է բառաշեշտից, որը գրվում է վերջընթեր վանկի վրա. օրինակ՝ ա՛ման, հըրսա՛նիք, ծ՛բ՛րան, մըսա՛նի, քըլճ՛դալ, պիլ՛մնի: Սակայն որոշ դեպքերում շեշտն ընկնում է նաև վերջին վանկի ձայնավորի վրա. ա) ուշ շրջանի փոխառություններում՝ պճդութո՛ւն, Ժշտան՛լի, կօքա՛յն, բ) երբ վերջընթեր վանկի ձայնավորը գաղտնավանկային բ կամ ի է՝ գրկճո, նըպա՛տ ճճիպոտ», խըմօ՛ր, սըֆընա՛ն ճսուզը հանած», դիբէ՛դ (դեպի+ետ), դիբի՛ւս (դեպի+լոյս), կըլըլըլի՛ւ՝ ճզուխլվա», ուտըցնի՛լ, մըծըցնի՛լ:

Շնչտապիտորույս դիրքում ձայնավորներն արտաբերվում են շատ թույլ և, փոփոխվող որակը, վերածվում են այլ ձայնավորների: Առաջնային շարքի ան, է ձայնավորները հերթագայվում են ի թույլ ձայնավորի հետ. օրինակ՝ պան-
րան-պիրանիլ, պանգուր(ը)-պիցրանալ, մուր-միրիլ, պարթ-պիրթօտ, կե-տ-կիտամեչ, կեշ-կիշանալ: Ո՛չ առաջնային ըհ-ն և ա-ն շնչտապիտ-
վելիս դառնում են ը, ինչպես՝ ծա՛նգըր-ծընգրա՛նալ, կա՛թըն-կըթնա՛կէր, մա՛կատ-մըկա՛տին, քէ՛րծ-քըծը՛րաւ, սը՛զըն-սըզը՛ն, կը՛ծ-կըծա՛նալ:

5 U. U m r q m r i m n, n2q. m2/u., t2 23.

Ձայնավորները քմային արտասանություն ունեն ոչ միայն հին հայերենի բառասկզբի ձայնեղ պայթականների և կիսաշփականների, այլ նաև զ, Ժ ձայնեղ շփականների և լ ձայնորդի մոտ. օրինակ՝ բուրդ>պարթ, դու>տու, գործ>կ'օրծ, ձագ>ժագ, ջուր>ճճը, ալլա՝ զուր>զուր, զատիկ>զատիկ, զարդ>զարթ, ժառանգ>ժառանգ, ժամ>ժամ, ժանգ>ժանգ, լավ>լավ, լաց>լաց, լեզու>լուզու:

Խոսվածքի ձայնավորների հնչյունա-հնչույթային յուրօրինակ համակարգի ձևավորման համար, հավանաբար, մեծ դեր է կատարել բառասկզբի պայթական և կիսաշփական ձայնեղ բաղաձայնների խլացումը: Ձայնեղների խլացման հետևանքով ստեղծված նոր ձևերը կարող էին նույնանալ նախնական խուլերով սկսվող համանուն բառերի հետ: Այս պատճառով քմային (առաջնալին) և ո՛չ քմային (ո՛չ առաջնալին) ձայնավորները, որոնք, ըստ Աճառյանի օրենքի⁶, նախկինում միայն դիրքային տարբերակներ էին, սկսել են իմաստազատիչ դեր կատարել: Հասկանալի է, հենց հնչույթային ֆունկցիան էլ նրանց ստիպել է իբրև հնչյուններ նույնպես միմյանց ավելի հստակորեն հակադրվել: Այդ իսկ պատճառով, ո՛չ քմայինները հեռանալով քմային՝ առաջնալին շարքի փակ ձայնավորներից, արտասանության տեղով ավելի հոտ են գնացել և ստացել ավելի բաց արտասանություն: Հնարավոր է, որ առաջնալին ձայնավորներն էլ դարձել են ավելի փակ:

Նախնական խուլերի և ձայնորդների մոտ ձայնավորների ավելի բաց արտասանությանը նպաստել է բառաշեշտը, որովհետև շեշտյալ դիրքում դրանք ավելի հստակորեն են հակադրվել փակ ձայնավորներին: Այս երեւույթի հետևանքով, շեշտյալ և անշեշտ վանկերում գրաբարյան միևնույն հնչյունի դիմաց խոսվածքում առկա են երկու տարբեր ձայնավորներ:

Գրաբարից եկող խուլերի մոտ գտնվող ո ձայնավորը շեշտի տակ մնացել է անփոփոխ (բառասկզբի ո-ն հիմնականում տվել է վրէ), միայն ստացել է բաց և հոտնալեզվային արտասանություն, որով ավելի է հակադրվել նախնական ձայնեղներից ստացված խուլերից հետո եկող փակ օ-ին. օրինակ՝ խոտ>խոտ, կոբիզ>կո'րինձ, թոնիր>թո'րէն, կոտորել>կո'տրիլ: Շեշտի տակ ու-ն ունեցել է այնքան բաց արտասանություն, որ նույնացել է օ-ի հետ. օրինակ՝ մոխ>մօխ, մովն>մօ'կնը, մրմունջ>մրմօ'նջ, ուտել>օ'տիլ, ծունկն>ծօ'նգնը, ուրիշ>օ'րիշ:

Անշեշտ վանկում ու-ն մնացել է անփոփոխ. օրինակ՝ ուրաւալ>ուրա'ւալ, կառու>կա'տու, ադուն>ա'դուն, հիսուն>ի'ծծուն, սկեսուր>ըսկէ'սուր, փետուր>թէ'փու:

Այսպիսով, խոսվածքում նախնական խուլերից և ձայնորդներից հետո շեշտի տակ ու-ի փոխարեն հանդես է եկել օ, իսկ անշեշտ վանկում այն պահպանվել է: Այս հանգամանքը նպաստել է այդ հնչյունների՝ դիրքային տարբերակների վերածվելուն: Ու-ն սկսել է փոխարինել օ-ին բոլոր անշեշտ վանկերում. ափսոս>ա'փսուս, ախոռ>ա'խուռ, մեռոն>մէ'ռուն, փոխանորդ>փօ'խնուրթ, լակոտ>լա'կուտ, շնորհակալ>շունուհա'կալ, աղօթաբան>ըղութա'բան, շեշտակորույս դիրքում՝ խօտ-խուտէ'րան, փօր-փուրա'ցավ, թօնը-թուռնէ'րան, կօլ-կուլէ'րավ, խօսիլ-խուսի'լավ, ճախիլ-ուտըցնի'լ:

⁶ Հ. ր. Աճառյան, Քննություն վանի բարբառի, Երևան, 1963, էջ 19,

Շեշտի տակ ու կա այն բառերում, որոնք ուշ շրջանի գրական հայերենից կամ այլ լեզուներից փոխառություններ են. ինչպես՝ ունթո՛ւնիլ<ընդունել, ցունծո՛ւղ<ցնցուղ, հո՛ւլիս<հուլիս, հո՛ւնիս<հունիս, կո՛ւփիչ<կոփիչ, մոթ (նաև՝ մօթ)<մոթ (ավելի տարածված է մրթը՛ն ձևը), շոտոմֆո՛ւր (նաև՝ շըղմֆո՛ւր)<շոտմֆուր, կո՛ւնի «փոքր», ղոլ «ծառա», ղում «ավազ», պո՛ւնախ «առնկյուն», ո՛ւստա, ո՛ւմբը «կյանք», ժո՛ւլիկ «խաբբա», խորա՝ մանկ», նո՛ւլի «գուլպա»։ Որոշ բառերում շեշտի տակ օ-ի փոխարեն հանգիպում է ու, որ կարելի է բացատրել մ, պ, փ շրթնային բաղաձայնների ազդեցությամբ. ինչպես՝ փոլ<փող, փո՛ւշի<փոշի, մում<մում, ծում<ծում։ Մի քանի մասնավոր դեպքերում էլ շեշտի տակ ու կա առնմանության հետևանքով, որ, հավանաբար, շատ ուշ շրջանի երևույթ է. օրինակ՝ քոսոս>ֆօսոսո||ֆոսոսո, կոծոծ>կօ՛ծոծ||կո՛ւծոծ, կոտոռ>կօ՛տոռ||կո՛ւտոռ, խոտոռ>խօ՛տոռ||սոտոռու և 1. անպետք, վատ, 2. իզուր>օղ||օղ դերբայական վերջածանցն անշեշտ դիրքում հաճախ մնում է անփոփոխ՝ տա՛նօղ, օ՛տօղ (նաև՝ օ՛տուղ), կա՛խօղ, խօ՛սօղ (նաև՝ իօ՛ստղ)։ Կարծում ենք, որ դա գրական հայերենի ազդեցություն է։ Շեշտի տակ ու>օ և անշեշտ վանկում օ>ու օրենքը գործել է երկար ժամանակ, որովհետև դրանից շեղվող բառերը քիչ թիվ են կազմում։

Օ-ն նույնպես հերթագայվում է ու-ի հետ։ Բայց ու-ն փոխարինում է օ-ին ոչ թե բոլոր անշեշտ վանկերում, այլ միայն շեշտակորոյս դիրքում. օրինակ՝ կ՛օրծ>կ՛ուրծի՛լի, կ՛օղ>կ՛ուղա՛նալ, տօղ>տուղըցնի՛լ, ծօր>ծուրե՛րան, բայց՝ զանքօ՛չ, ալօր, կի՛նա՛զօխ, ուսա՛շօր։ Այս հանգամանքը թալ է սալիս կարծելու, որ օ>ու օրենքը գործել է ավելի ուշ՝ օ>ու-ի համաբանությամբ։ Նախքան օ>օ և օ>ու հնչյունափոխությունները աւ երկբարբառն՝ արդեն վերածվել էր օ-ի, որովհետև այն ևս ենթարկվում է նշված օրենքներին. օրինակ՝ զաւտի>կ՛օտի—կ՛ուտկա՛տը, զաւրել>զօրիլ—զուրա՛վը, հաւաաղ>հօտաղ—հուտա՛ղա «հոտաղից», կարաւա>կարուա—կըրօտիլ, ամաւթ>համութ—հըմթանք, աւր>օր—ուրը՛կան, մաւտ>մօտ—մուտա՛նալ։

Ի ձայնավորը նույնպես ենթարկվել է շեշտից կախված հնչյունափոխության, իսկ նրանից և ձայնորդներից հետո շեշտի տակ ի-ն մեծ մասամբ դարձել է բաց ըէ. ինչպես՝ թիզ>թէզ, թիկուց>թէ՛զուց, թի>թէ, ծիտ>ծէտ, ծիրաց>ծէ՛րաց, ցիթ>ցէթ, սիրա>սըհրա։ Այն շեշտից անկախ պահպանվել է գրաբարյան ձայնեղներից հետո և բառասկզբի դիրքերում. ինչպես՝ ձի>ծի, գինդ>կինդ, գինի>կի՛նի, դիմանալ>տիմա՛նալ, ժիւ>ժիւ, ջիլ>նիլ, իլ>ի՛լիկ, իմ>իմ, ինն>ի՛նը, ինչ>նինչ, իսկի>իշկի՛։ Անշեշտ վանկերում ամենուր ի-ն մնացել է անփոփոխ կամ տվել է ի. օրինակ՝ աղջիկ>ա՛խնիկ, գիշեր>գիշէ՛ր, բանալի>ալիա՛նի, կատիկ>կա՛տիկ, մորթի>մօրթի։

Ուրեմն, կարելի է ենթադրել, որ ձայնեղներից հետո, ինչպես մյուս ձայնավորները, ի-ն ևս ունեցել է փակ արտասանություն, իսկ խուլերի և ձայնորդների մոտ շեշտի տակ՝ համեմատաբար ավելի բաց արտասանություն։ Երկու ի-երն արտասանությամբ միմյանցից ավելի են հեռացել նույն պատճառով, ինչ և փակ ու բաց մյուս ձայնավորները՝ ձայնեղների խլացումից։

հետո խմաստագատիչ դեր կատարելու հետևանքով: Հետագայում շեշտակիր բաց ի-ն նույնացել է բաց (հտին շարքի) ըհ-ի հետ:

Այս օրինքը նույն հետևողականությամբ չի գործել, ինչպես, ասենք, ու>օ-ի դեպքում: Ինչ-ինչ պատճառներով շեշտի տակ ի-ն պահպանվել է այնպիսի բառերում, որոնք հետագայում գրական հայերենից կամ այլ բարբառներից կատարված փոխառություններ լինել չեն կարող՝ ծիլ>ծիլ, շիր>շիր, սպիտակ>(ի)սպի՛տակ, ծիծաղ>ծի՛ծաղ, լի>լի՛գրև, ճիվաճիլ>ճի՛վաճիլ:

Մի քանի բառերում, թեպետ ի-ն գտնվում է անշեշտ դիրքում, բայց դարձել է ըհ, որը կարելի է բացատրել ձայնավորների ներդաշնակության օրինքով՝ հարակից վանկերի բաց ձայնավորների ազդեցությամբ ինքը նույնպես արտասանվել է ավելի բաց. օրինակ՝ մութիր>մո՛խըհ, կորիզ>կօրըհնձ (նաև՝ կօրիհնձ), հացիծ>հա՛ցըհ (նաև՝ հա՛ցիծ), բոցիր>բօրըհն:

Այլ Մարգարյանը գտնում է, որ «մերձակից՝ Ղարարադի բարբառին հատուկ ըհ ձայնավորը բացակայում է Գորիսի բարբառում. ճիշտ է, առանձին գյուղական խոսվածքներում որոշ բառերի մեջ մաքուր է-ի փոխարեն երբեմն կամ հաճախ ըհ է լսվում (հմմտ. մեա—մըհ<միս, վոտ || վիտ—վըտ<հոտ, տէսնալ—տըսնալ<տեսնել և այլն), բայց պետք է ասել, որ այն ընդհանուր առմամբ հնչյութային արժեք չի ստանում և այդ պատճառով ձայնավորների համակարգում իբրև ինքնուրույն ու անկախ հնչյութ չի նշվում»⁷:

Երկու տեսակ է-ի արտասանությունը հատուկ է ոչ միայն «առանձին», այլ գրեթե բոլոր գյուղերին և Գորիս քաղաքին: Այդ երևույթը լավ է պահպանվել գրական հայերենին շտիրապետող բարբառախոսների մոտ: Բաց և փակ է-երի արտասանությունը Գորիսի խոսվածքում ոչ թե պատահական, ասենք, հարևան խոսվածքների կամ բարբառների ազդեցություն է, այլ պայմանավորված է հենց խոսվածքի ձայնավորային համակարգի բնույթով: Է-ն առաջնային շարքի միջին բարձրացման ձայնավոր է: Այն իր արտասանության տեղով ու բնույթով մոտենում է ի ձայնավորին, իսկ ըհ-ն հտին շարքի ձայնավոր է և բարձրացման աստիճանով մոտենում է ա-ին:

Առաջնային փակ է-ն հանդես է գալիս այն դիրքում, ինչ դիրքում և մյուս առաջնային (քմային) ձայնավորները՝ գրաբարյան ձայնեղ բաղաձայններից հետո, օրինակ՝ գեշ>գե՛շ, գերաց>գե՛րաց, բերաց>պե՛րաց, դեզ>տեզ, ձեթ>ծեթ, ջերմ(և)>ճե՛րմ:

Ետին շարքի բաց ըհ-ն հանդիպում է գրաբարյան խուլ, շնչեղ խուլ բաղաձայնների և ձայնորդների մոտ. օրինակ՝ ախանցել>տըհ՛սնիլ, տեղ>տըհլ, պեղել>պըհըհ՛ղը, սերմն>սըհ՛րմ(ն)ը, կեղ>կըհլ, ցայտ>ցեթ>ցըհթ: Գրաբարյան ի-ից ծագող ըհ-ն միշտ բաց է. ինչպես՝ քիթ>քըհթ, ծիտ>ծըհտ, սիրտ>սըհրտ, ծիրան>ծըհ՛րան, մթին>մըթըհ՛ն: Բառակցքի ո-ից կամ բառամիջի ռ-ից առաջացած վե հնչյունակապակցության մեջ նույնպես ե-ն հիմնականում հտին շարքի ձայնավոր է (վըհ), ինչպես՝ որդի>վըհ՛րթի, ոչխար>վըհ՛լխար, որ>վըհ՛ր, աշխատաւոր>ըշխըհ՛աւըհ:

Երկու է-երի տարբերակումն առաջացել է այն ժամանակաշրջանում, երբ խոսվածքում ոչ միայն գրաբարյան է և ե ձայնավորները, այլ նաև այ երկ-

⁷ Այլ Մարգարյան, նշվ. աշխ., էջ 23—24.

բարբառը նույնացել էին: Ներկայիս է-ն և լ-ն առաջացել են ոչ թե գրաբար-
յան է-ի, ե-ի, այ-ի հիմքի վրա, այլ տարբեր դիրքերի հետևանքով: Այսպես՝
գրաբարյան է-ի դիմաց ձայնեղների մոտ առկա է առաջնային (փակ) է, իսկ
խուլերի և ձայնորդների մոտ՝ հոփն շարքի (բաց) լ-ն. օրինակ՝ գեշ>կեշ,
գեշ>կեմ, դեզ>տեզ, դեմ>տեմ, բայց՝ տեք>տեք, կես>կես, կես>կեսո,
պետք>պլետկ: Նույնը և ե ձայնավորը՝ բերան>պե՛րան, բերք>պե՛րք,
գետ>կե՛տ, ջերմ(ն)>նե՛րմ, բայց՝ կեղ>կե՛ղ, ծեփ>ծե՛փ, խեղճ>խե՛ղճ,
բեփ>բե՛փ: Այ բրկբարբառի դեպքում նույն երևույթն է՝ ձայն>ծե՛ն, ընդ
այն>*ղայն>տե՛ն, ընդ այս>*ղայս>տե՛ս, բայց՝ կայծ>կե՛ծ, ծայր>ծե՛ր,
տայգր>տե՛քր, ցայտ>ցե՛տ:

Ուրեմն, նախքան երկու է-երի տարբերակումը խոսվածքում եղել է
մեկ է, որը ծագել է նախնական է, ե հնչյուններից և այ բրկբարբառից:

Առաջնային և հոփն շարքի է-երը միմյանց հակադրվում են ոչ միայն
արտասանությամբ, այլ նաև ենթարկվում են այն հնչյունական օրենքներին,
ինչ առաջնային և հոփն շարքի (քմային և ո՛չ քմային) մյուս ձայնավորները:
Այսպես, շեշտակորույս դիրքում առաջնային շարքի է-ն հերթագայվում է ի,
իսկ հոփն շարքի լ-ն՝ ը ձայնավորի հետ. օրինակ՝ պե՛րան—պի՛րանա՝
ե՛րգ՛ան—ի՛րգի՛ն(ի)ցնի՛լ, թե՛վ—թի՛վալակ, մե՛ծ—մե՛ծանալ, սե՛զնը—սը՛զնե՛զ՝
կե՛ծ—կը՛ծանալ, տե՛սնիլ—աը՛սնի՛լի, տե՛քըլ—աը՛քնակից: Բայց գրաբար-
յան ե-ից եկող երկու է-երն էլ պահպանել են շեշտից կախված ե>ի հեր-
թագայությունը. օրինակ՝ դեզ>տեզ—տի՛զալ ա, եշ>եշ—իշանցած, կես>
կես—կիսովան, սեք>սե՛ք—սի՛րիլի: Սակայն որոշ դեպքերում ե-ից եկող
հոփն շարքի է-ն, ենթարկվելով խոսվածքի ներքին օրենքին, շեշտակորույս
դիրքում հերթագայվում է ը-ի հետ, որը խորթ է գրաբարին. օրինակ՝ տեք>
տե՛քր—տը՛քրու (նաև՝ տի՛քրու), պե՛տք>պե՛տկ—պը՛տկան, կես>կե՛տ-
կը՛տըցնիլ:

Ձայնավորների ներդաշնակության օրենքի համաձայն է-ն լինում է
առաջնային շարքի, իսկ լ-ն՝ ո՛չ առաջնային շարքի ձայնավորների հարե-
վանությամբ. ինչպես՝ իվէ՛րագ «ավերակ», ե՛րգ՛ան «երկար», նի՛նգէ՛ր «ըն-
կեր», իրե՛քնակ «արեգակ», բայց՝ մե՛շտը «մոխիր», խե՛լունք «խելոք»,
ծե՛րան «ծիրան», կո՛տըմնը «կոտենմ», ըսե՛լան «ասեղից»:

Այս տեսակետից հետաքրքիր է նշել հետևյալ երևույթը. խոսվածքը խու-
սափում է է-երով կողք-կողքի կրկնվող վանկերից: Եթե այդ վանկերը առաջ-
նային է-երից են կազմված, ապա դրանցից մեկը, նույնիսկ շեշտի տակ,
տարմանությամբ փոխվում է ի փակ ձայնավորի, որն այնքան էլ բնորոշ չէ
խոսվածքին (շեշտի տակ նախնական խուլերի և ձայնորդների մոտ ի>լ է).
օրինակ՝ ալետոք>*նալէ՛վէր, ապա՝ նիլի՛վէր, որբեայրի>ի՛րփիլէ՛րի, բե-
թե>թի՛թէվ, տեբե>տի՛րէվ, նետեւել>նի՛ղէվիլ, գեբեզման>կի՛րէ՛զման,
երես>ի՛րէս, երեբ>ի՛րէբ, (ց)երեկ>ցի՛րէկ:

Ետին շարքի լ-երի դեպքում՝ նույն բանում, դրանցից մեկը դառնում է ը
էամ ա, այսինքն՝ հոփն շարքի ձայնավորներ. ինչպես՝ երեսուն>ըրե՛սուն,
երեսիլ>(ը)րե՛վալ, երեսն>(ը)րե՛վան:—Եղեն և երեկ վերջածանցների ե և
ե պետք է ենթադրել, որ խոսվածքում նախ նույնացել են, ինչպես այլ
դեպքերում, ապա դարձել են միանման արտասանվող հոփն շարքի լ-եր:

որի հետևանքով հետագայում դրանք փոխվել են -բհղան և -բհրան ձևերի. ինչպես՝ ամսանդեհն > քմընբհղան, փայտեդեհն > փըդեհղան, հայերեհն > հըլբհրան, թուրքերեհն > քուրքըհրան:

Ինչպես նշվեց, Գորիսի խոսվածքն ունի առաջնային փակ և ո՛չ առաջնալին բաց ձայնավորների երկշարք համակարգ: Ձայնավորների այս հատկանիշները նաև հնչույթային հատկանիշներ են:

Ա և ա ձայնավորները ինքնուրույն հնչույթներ են և որպես այդպիսիք հակադրվում են միմյանց. օրինակ՝ պահիլ բռահիլ—պահիլ պահահիլ, աասը բռասը—աասը աասը, ծախիլ բծախիլ—ծախիլ բծախիլ:

Նույնը կարելի է ասել օ և օ ձայնավորների մասին. օրինակ՝ կօրծիլ բգործիլ—կօրծիլ բկրծիլ, կօղիլ բգողիլ—կօղիլ (ինգիլ) բհամառիլ, կողիլ բնկնիլ, ածղ բդող—աող աող:

Ը-ն, ինչպես գրական հայերենում և գրաբարում, թույլ ձայնավոր է: Եթե չհաշվենք մի քանի բնաձայնություններ, ինչպես՝ բըխկ, բըփ, շըխկ և այլն, և փոխառյալ բառեր՝ դամազըղ սեհրունդ, բըխըղ, խըլըղ շապիկ, դըբըն թարու այծ և այլն, այն երբեք շեշտի տակ չի գտնվում: Բայց և այնպես ը-ն ինքնուրույն հնչույթ է և հակադրվում է անդամ մերձավորագույնի (ի) փակ ձայնավորին. օրինակ՝ աղը՝ աղը—աղի աղի, պա՛րը ապարը—պա՛րի ապարի, կըրի՛լի կըրելու—կի՛րի՛լի կըրելու, աընի՛լի առանելու—աի՛նի՛լի աղնելու, ճըրի՛լի ճգտնելու, ճարելու—ճի՛րի՛լի ճըրելու:

Ինչպես վերը նշվեց, ա ձայնավորը շեշտակիր վանկում դառնում է օ: Շեշտի տակ ու > օ օրենքը դադարել է գործել ոչ վաղ անցյալում, որովհետև շեշտակիր ա-ով ձևերը հիմնականում ուշ շրջանի փոխառություններ են կամ նորակազմություններ և անհամեմատ ավելի քիչ են, քան օ-ով ձևերը: Օ-ն և ու-ն տարբեր հնչույթներ չեն եղել. ու-ն եղել է օ-ի դիրքային (անշեշտ դիրք) տարբերակը: Այժմ օ-ն և ու-ն որպես հնչույթներ գրեթե չեն հակադրվում: Ուշ շրջանի միայն մի քանի փոխառյալ բառեր են ստեղծում իմաստային նվազագույն զույգեր. ինչպես՝ դուլ թառա—դոլ թկողմ, նուր թլ. լույս, շ. չնաշխարհիկ—նուր թնոր, փուլ թկտր քար—փոլ (ածիլ) թփուլ (ածել): Երբեմն էլ դրանք հանդես են գալիս իբրև ազատ տարբերակներ. օրինակ՝ ուրե՛կան—օրե՛կան օրեկան, ուրօ՛րուց—ուրօ՛րոց օրորոց, ֆուղա՛վէր—ֆողա՛վէր թողավոր, սո՛ւլուլ—սըլո՛լ սասանամանիք, ֆո՛սուտ—ֆո՛սուտ թոսոտ, փուլ—փոլ թփուլ:

Ու-ն, ի տարբերություն ու-ի, կարող է հանդես գալ և՛ շեշտի տակ՝ աու՛ < դու, կու՛թան < գութան, զու՛քիլ < զուգել, և՛ անշեշտ վանկում՝ զամբուլ < զամբիւղ, զարթուն < զարթուն, պարուր < բարուր: Այդ պատճառով դրանք հիմնականում միմյանց հակադրվում են անշեշտ դիրքում. այսինքն՝ բազմամանկ բառերում: Սակայն ձայնավորների ներդաշնակության օրենքով ու-ն հանդես է գալիս առաջնային շարքի ձայնավորներով վանկերի հարեկանությամբ, իսկ ու-ն՝ ո՛չ առաջնային, ինչպես՝ ախալը՝ աղը—ախալը թեղբոր, կուղե՛րան թգուղերից—կուղե՛րան թկողերից: Մի հանգամանք, որ դժվարացնում է իմաստային նվազագույն զույգեր բացահայտելը:

Կարելի է դիմել քննության մեկ այլ եղանակի: Բառաբարդման ժամա-

նակ խոսվածքում ձայնավորների ներդաշնակության օրենքը չի գործում, այսինքն՝ յուրաքանչյուր բաղադրիչ պահանջում է ձայնավորների իր կարգը և մեկը մյուսի վրա չի ազդում։ Այդպիսի բարդություններում, եթե ունեւն փոխարինենք միմյանցով, բառի նախնական իմաստը կփոխվի կամ կաղապարվի։ Կապեն՝ կուլատակ թոնոտի տակը—կուլատակ թգայլի տակը, կուլատակ թգյուգատակ—կուլատակ թմարմնի մի կողքի տակը, ծուռնատէր թոնոտի—ծուռնատէր ձեւ աղավաղված է, կուրաթօթպ թխտ մառախուղ—կուրաթօթպ ձեւ իմաստագուրկ է, պուզընարիլ թպոզահարիլ—պուզընարիլ ձեւ չի հասկացվում և այլն։

Ուրեմն, ունեւ և սեւ, թեպետ համանման դիրքում քիչ են հանդիպում, խոսվածքում տարբեր հնչույթներ են։

Առաջնային շարքի է-ն և ետին շարքի լ-ն առաջացել են նույն այն պատճառով, ինչ և այդ հակադրվող շարքերի մյուս ձայնավորները։ Մինչև բառասկզբի ձայնեղների խլացումը մյուս ձայնավորների նման դրանք եղել են դիրքային տարբերակներ։ ձայնեղ բաղաձայններից հետո հանդես է եկել առաջնային է-ն, խուլերից և ձայնորդներից հետո՝ ո՛չ առաջնային լ-ն։ Ձայնեղների խլացումից հետո դրանք բացառված դիրք չեն ունեցել, հետևաբար դիրքային տարբերակներ լինել չէին կարող։ Դրանք արտասանության միմյանցից հեռացել և իրար ավելի հստակորեն են հակադրվել իմաստազատիչ դեր կատարելու հետևանքով։ Կարծում ենք, եթե այդպիսի իմաստազատիչ՝ հնչույթային դեր չունենային, ձայնեղների խլացումից հետո, խուսափելով ձայնավորային համակարգի ավելորդ ծանրաբեռնվածությունից, խոսվածքը այդ երկու է-երը կարող էր նույնացնել և ոչ թե պահանջել մինչև մեր օրերը։ Թեպետ դժվար է առաջնային և ետին շարքի է-երով իմաստային նվազագույն զույգեր բացահայտելը, որովհետև դրանք նույնպես բազմավանկ բառերի դեպքում գտնվում են տարբեր (առաջնային և ո՛չ առաջնային) ձայնավորների շրջապատում, բայց և այնպես տարբեր արտասանություն ունեցող հետևյալ զույգերը հակադրվում են նաև իմաստներով։ օրինակ՝ ալէս < դէս (ընդ+այս)—ալէս թոնո, կէտ թգետ—կէտ թճանճի տեսակ, աեզ թգեզ—ալէզ թտիզ, ծեց թճան—ծլէց թծին (ընկերք)» և այլն։ Այժմ որոշ հակում կա այդ երկու է-երը նույնացնելու և արտաբերելու գրական հայերենի է-ի նման։ Հետևաբար, դրանց իմաստազատիչ դերը աստիճանաբար կորչում է։

Այսպիսով, Գորիսի խոսվածքի ձայնավոր հնչույթներն են. ա, օ||ու, լէ, ը, օ, ու, ե, ի։ Սակայն դրանցից մի քանիսը հանդես են գալիս որպես մյուսների դիրքային (շեշտակորույս դիրք) տարբերակներ։ ա, լէ ետին շարքի ձայնավորներին այդ դիրքում փոխարինում է ը-ն, իսկ օ, ու, է առաջնային ձայնավորներին՝ ի-ն, օ-ին՝ ու-ն։ Երբեմն էլ նույն որակի ձայնավորների առաջնային և ո՛չ առաջնային տարբերակները հանդես են գալիս որպես նույն հնչույթի ազատ տարբերակներ։

Գրաբարյան այն հնչյունակապակցությունները, որոնց երկբարբառ լինելը կասկած չի հարուցում, խոսվածքում պարզեցվել են՝ վերածվելով պարզ ձայնավորների։ օրինակ՝ այծ>էծ, նաւթ>նօթ, ցուրեմ>ցօ՛ւրէմ, իւրեան>ուրան։

Այժմ քննենք գրաբարյան ուժայնավոր կապակցությունների զարգացումը խոսվածքում:

Ըստ Ալ. Մարգարյանի, գրաբարյան ուա և ուե կապակցությունների մեջ ու-ն գարձել է վ բաղաձայն⁸, Սակայն խոսվածքի այդ հնչյունակապակցությունները հիմնականում պահպանվել են և նույնիսկ ավելի լայն ընդգրկում ստացել: Թե՛ գրաբարից եկող և թե՛ զուտ բարբառային ձևերում բաղաձայնից հետո ձայնավորից առաջ դիրքում մաքուր ու չի հնչվում: Դա ու-ի և վ-ի միջև միջին դիրք գրավող մի հնչյուն է, որ հարմար ենք գտնում տառադարձել և նշանով: Այն երբեք շեշտ չի ստանում և կարող է հանդես գալ ու-ից բացի մյուս բոլոր ձայնավորների հետ. օրինակ՝ նուազ > նուզ, զզուանք > զզուանք, զուզուանք, (ը)զզուի՛լ || (ը)զուի՛լ, տուաբած > տա՛բած, կոուել > կուել՛ի, չուան > չուան, շուի > շուի՛, ալէ՛ր ճանրքե, նուրան ճթոց, չուան ճարդ, տի՛ն ճուլին, տա՛լ ա ճուլել է, սըծըցնի՛լ ճստվածացնել:

Այս հնչյունակապակցություններն ունեն ղվանկատվող արտասանություն: Եթե ա, ւ, է, ի, ւ, օ, ւր կապակցություններում ւ-ն արտաբերվի որպես լիաձայն ու, և բաղադրիչներն էլ որպես երկու վանկի բաժանվող ձայնավորներ, այսինքն՝ հորանջով (ուա, ուէ, ուի, ուօ, ուր), ապա տվյալ բառերը, հատկապես ենթատեքստից դուրս, հաճախ դառնում են անհասկանալի: Ի-ն անկայուն է, որ կարելի է բացատրել ոչ միայն նրա արտասանության տեղով և բնույթով (այն շատ քիչ է տարբերվում ու-ից կամ վ-ից), այլ նաև գրական հայերենի ազդեցությամբ: Այն երբեմն արտաբերվում է մե՛րթ ու, մե՛րթ էլ վ: Սակայն ուշադրության է արժանի հետևյալ հանգամանքը: Երբ ւ-ն ձայնավորից առաջ բարբառախոսը որպես վ բաղաձայն է արտաբերում, գաղտնավանկում ք է լինում՝ տըվա՛բած, կըզըվի՛լ, տըվէ՛ր, նըվա՛զ, իսկ երբ լիաձայն ու՝ դրանից հետո վ է ավելանում, ստեղծված հորանջից խուսափելու համար՝ նուվա՛զ, տուվա՛բած, տուվէ՛ր, շուվէ՛ր, (ը)զուզուվի՛լ, սուվըծըցնի՛լ, ծուվո՛ց: Սա ապացույց է այն բանի, որ լիաձայն ու-ի ձայնավոր կապակցությունները խոսվածքին խորթ են, որոնցից նա խուսափում է վ բաղաձայնի հավելումով: Ձայնավորների ներդաշնակության համաձայն դիտվում են նաև այդ հնչյունակապակցությունների քմային արտասանություն. ինչպես՝ լազու՛ ճիզու՛—լազու՛նի ճիզվանի, ծու՛ ճու՛—ծու՛նք, զրուանք > ֆիլուանք || ֆուլանք:

Քննվող հնչյունակապակցությունները խոսվածքում որքան էլ ինքնուրույն զարգացում ունենան, կասկածից վեր է, որ սկիզբ են առնում գրաբարից: Ու-ի ձայնավոր կապակցությունները, ինչպես Հ. Մուրադյանն է գտնում, երկբարբառներ չեն եղել: Խոսվածքում նույնպես դրանք, հավանաբար, երկար ժամանակ եղել են երկու վանկի բաժանվող ձայնավորներ: Չկա ձևաբանական որևէ հատկանիշ, որով ապացուցվեր վաղ շրջանում դրանց միավանկ արտասանությունը: Ընդհակառակը, չա՛ն բառն, օրինակ, բազմավանկ բառերի նման ստանում է -նի հոգնակերտ ածանցը՝ չըննի՛: Բացի այդ, որոշ դեպքերում գրաբարյան ու-ի ձայնավոր կապակցությունը չի պահպանվում, և հնչյունափոխությունը կատարվում է տարբեր ձևով. ինչպես՝ դուա > տի-

⁸ Նույն տեղում, էջ 72:

⁹ Հ. Մուրադյան, Երկբարբառներ էին, արդյոք, ուա, ուէ, ուի... կապակցությունները գրաբարում (Պատմա-բանասիրական հանդես, 1971, № 4, էջ 235—244):

ժար, աստուած> աստուծ, աուար> աավար, լուանալ> լիվանալ, լուացք> լիվանգ: Բոլոր բառերսմ ուա կապակցությունն է, որը, սակայն, տարբեր ձևով է դրսևորված խոսվածքում: Եթե ուա կապակցությունը գրաբարում կամ խոսվածքում երկբարբառ լիներ, փոխակերպումը կլիներ միանման, այնինչ ամեն կոնկրետ դեպքում առկա է մի հնչյունափոխություն:

Հետևաբար, խոսվածքում ւ-ծայնավոր կապակցությունների երկբարբառային արտասանությունն ավելի ուշ շրջանի արդյունք է: Այս ենթադրության օգտին է խոսում այն փաստը, որ խոսվածքում պահպանված գրաբարյան ձևերի կողքին (նա՛զ, զուգի՛լ, շի՛ն, տա՛րած և այլն), կան ոչ միայն խոսվածքում առաջացած նոր բառեր, ինչպես՝ տւ՛շ՛ր ճներքեա, աւի՛ն թուվեցին», տա՛լ ա թուվի է», նա՛րան թթոց, կողով» և այլն, այլ նաև բառաթեքման կամ բաղադրման հետևանքով ձայնավորից հետո բառավերջի վ բաղաձայնի ւ-ի հնչյունափոխվելու այնպիսի դեպքեր, որ գրաբարում չեն եղել: Ելապես՝ ցավ-ցւըցնիլ, սւշվ-սւըցնիլ, կօվ-կւշ՛րան, քիչե՛վ-քըւիլ || քուչիլ, հօվ-հւըցնիլ, հւանալ, սօվ-սւըըցնիլ, սօվօր-սւօրիլ || սւշ՛րիլ: Այստեղ շեշտակորույս դիրքում, արմատի ձայնավորի թուլանալու և ընկնելու հետեվանքով, վ-ն հայտնվելով բաղաձայնի և ձայնավորի միջև հնչյունափոխվում է ւ-ի:

Գործիս խոսվածքը գրաբարից ժառանգել ու պահպանել է ու-ծայնավոր կապակցությունները ոչ թե քառացած ձևով, այլ իր զարգացման ընթացքում այն դարձել է տվյալ դիրքի համար հնչյունական մի օրենք, ըստ որի բաղաձայնից հետո ձայնավորի մոտ հնարավոր վ, ու, ւ հնչյուններից հանդես է գալիս միայն ւ-ն: Այդպիսով, փաստորեն, Գործիս խոսվածքում առկա է վ, ու, ւ հնչյունների ենթահնչյութային այնպիսի հարաբերություն, ինչպիսին է. Աղայանը ենթադրում է գրաբարի համար¹⁰, Բառասկզբում ձայնավորից առաջ, միջձայնավորային դիրքում և բառավերջում ձայնավորից հետո խոսվածքում միշտ հանդես է գալիս շրթնատամնային բաղաձայն վ. օրինակ՝ վշ՛րթի, վշ՛սկի, վարիլ, վախիլ, տավար, հիվանդ, կօվ, սւշվ: Բառասկզբում բաղաձայնից առաջ, բաղաձայնների միջև և բառավերջում բաղաձայնից հետո միշտ լինում է վանկարար ու ձայնավոր (որը նաև օ-ի դիրքային տարբերակն է). ինչպես՝ ուլիա՛նալ, ուտի՛լի, հա՛մուք, հա՛րուստ, կա՛տու: Բառամիջում ձայնավորից առաջ կամ հետո դիրքում ձայնորդ ւ է. օրինակ՝ ցւըցնիլ, սւըցնիլ, հւանալ, սւշ՛րիլ, յըրօւմ ա, տւա՛րած, զուգւ՛լի:

Արդյո՞ք խոսվածքում ւ-ով կապակցությունները երկբարբառներ են:

Ձևաբանական հատկանիշը տվյալ դեպքում որոշող հանգամանք լինել չի կարող, քանի որ երկբարբառային արտասանությունը ուշ շրջանի արդյունք է, իսկ ինչ-որ ժամանակ առաջացած քերականական ձևերը կարող են պահպանվել՝ բառի կրած հնչյունական փոփոխություններից անկախ:

Երկբարբառների որոշման ժամանակ, կարծում ենք, էական չափանիշը պետք է համարել նրանց արտասանությունը: Իսկ վերը նշված կապակցություններն ունեն չվանկատվող, երկբարբառային արտասանություն: Բացի այդ, քիչ կարևոր չէ նաև ւ-ի ֆունկցիոնալ հատկանիշը. այն հանդես է գալիս միայն բաղաձայնով նախորդված կամ հաջորդված ձայնավորների մոտ, հետևաբար ձայնորդ է:

¹⁰ Է. Աղայան, Գրաբարի քերականություն, Երևան, 1964, էջ 188—189.

խոսվածքում Վ-ով կապակցությունների բաղադրիչները հավասար լարվածություն չունեն. Վ-ն միշտ թույլ է, իսկ նրա հետ հանդես եկող ձայնավորը լիաձայն է և վանկարար: Այդ Վ-ի մոտ կարող են դանվել տարբեր ձայնավորներ: Ինչպես՝ տի՛ր՝ «ուլիհոհ» — տա՛լ ա «տվել է», ծուծուօ՛ց «ծվծվոց» — ծուծուցնի՛լ «ծվծվացնել», սու֛րիլ||սւլէ՛րիլ «սովորել» — սւրբցնի՛լ «սովորեցնել» և այլն: Առաջին բառում արմատի ու-ն ձայնավոր վերջավորություններից առաջ ստացել է թույլ Վ արտասանություն և միացել է այդ ձայնավորներին, իսկ մյուս բառերում առկա է խոսվածքին հատուկ շեշտից կախված հնչյունափոխություն, որին ենթարկվում է միայն շեշտակի բաղադրիչը:

Ուրեմն, Գորիսի խոսվածքում կան լա, լբ, լէ, լի, լօ, լը բարձրացող և օւ իջնող թույլ (կամ կեղծ) երկբարբառներ, որովհետև այդ հնչյունակապակցություններն ունեն չվանկատվող արտասանություն, բայց բաղադրիչները շուրջն են հավասար լարվածություն, և դրանց կապը բովանկան թույլ է, որի հետևանքով վանկարար բաղադրիչը կարող է հնչյունափոխվել:

Այսպիսով, կարելի է եղրակացնել.

ա) Գորիսի խոսվածքում բառասկզբի պայթական և նոսաշփական ձայնեղ բաղաձայնների խլտցման երևույթը փոխել է ոչ միայն բաղաձայնների, այլ նաև ձայնավորների հնչյունա-հնչույթային հարաբերությունը: Խլացման հետևանքով առաջնային և ո՛չ առաջնային ձայնավորները, որոնք նախապես եղել են միայն ուղիղային տարբերակներ, սկսել են կատարել իմաստադատիչ դեր:

բ) Խոսվածքի ձայնավորային համակարգի ձևավորման համար մեծ դեր է կատարել նաև շեշտը, որից կտրված հնչյունափոխությունների հետևանքով առաջացել են ինչպես զրարարից եկող տարբեր ձևեր, այնպես էլ ձայնավորների հնչյունա-հնչույթային նոր տիպի փոխհարաբերություններ:

գ) Խոսվածքն ունի Վ ձայնորոշով թույլ (կամ կեղծ) երկբարբառներ, որոնք ճիշտ է. սկիզբ են առնում զրարարից, բայց ավելի շատ խոսվածքի հնչյունային համակարգի ներքին զարգացման արդյունք են:

НЕКОТОРЫЕ ФОНЕТИКО-ФОНОЛОГИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ГОРИССКОГО ГОВОРА

ЖАННА МИКАЕЛЯН

Резюме

В горисском говоре вследствие оглушения начальных звонких взрывных и аффрикат изменилось фонетико-фонологическое отношение последующих гласных: гласные переднего и не-переднего рядов, которые первоначально являлись позиционными вариантами, постепенно начали выполнять смысловозначительную функцию, превратившись в самостоятельные фонемы. В говоре существует фонемологическая оппозиция гласных переднего—не-переднего рядов: *ā*-*a*, *nī*-*ni*, *ō*-*o*, *t*-*tʰ*, *ʰi*-*i*. Особенностью системы гласных является также наличие слабых или «ложных» дифтонгов, с сонорным компонентом *l*, *la*, *ltʰ*, *li*, *lo*, *li*, *ol*.